ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

20 մարտի ուրբաթ 2026
տպագրության ԺԵ տարի

32
(3241)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱՎԻՆՅԱՆԻ ԻՆՔՆԱԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՈՒՄ Է ԲՅՈՒՋԵՆ

Պաշտոնական փաստաթղթերը ուսումնասիրելով՝ «Ժողովուրդ» օրաթերթը բացահայտեց, որ Երեւանի քաղաքապետարանը սոցիալական մեդիայում ինքնագովազդ անելու համար բյուջետային միջոցներից 25.5 հազար դոլար գումար է հատկացրել:

Մասնավորապես, Երեւանի քաղաքապետարանը «ՊՐՈԴԻՋԻ» ՍՊԸ-ի հետ կնքել է պայմանագիր, որը ուժի մեջ է մինչեւ 2026 թվականի դեկտեմբերի 25-ը: Պայմանագրի ընդհանուր արժեքը կազմում է 9 միլիոն 600 հազար դրամ: «Ժողովուրդ» օրաթերթը պարզեց, որ ծառայությունների շրջանակը բավական լայն է. այն ներառում է Facebook, Instagram եւ TikTok հարթակներում գովազդների կառավարում եւ իրականացում: Ըստ պայմանագրի՝ սահմանվել են նաեւ հստակ չափորոշիչներ. ամեն ամիս գովազդային նյութերը պետք է ապահովեն առնվազն 2 միլիոն դիտում (impression), 1 միլիոն 200 հազար հասանելիություն (reach), իսկ TikTok-ում՝ առնվազն 750 հազար դիտում: Այսինքն՝ Հայաստանի եւ Երեւանի հպարտ հարկատուն եւ վարձատուն վճարում է Ավինյանի համար հավաքվող սրտիկների եւ քլիքների համար: Սա տարակուսելի է այն իմաստով, որ քաղաքացիները շարունակում են բախվել Երեւանի առօրյա խնդիրներին՝ փոսերով լի ճանապարհներ, վնասվող, կոտրվող ավտոմեքենաներ եւ չլուծվող ենթակառուցվածքային հարցեր: Սակայն Տիգրան Ավինյանի ղեկավարած քաղաքապետարանը առաջնահերթությունը տալիս է գովազդին:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ԱԺ ՔՊ խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանի եղբոր՝ Ավետ Կոնջորյանի գործը նոր հարցերի առաջ է կանգնեցրել իրավապահ համակարգին: Խնդիրը միայն այն չէ, որ վարորդական իրավունքից զրկված Կոնջորյանը կրկին մեքենա է վարել ու կանգնել դատարանի առաջ: Խնդիրն այն է, որ նախկինում դատապարտված Ավետ Կոնջորյանի քրեական վարույթում հայտնվել է «դատվածություն չունենալու» մասին տեղեկանք, ինչն էլ թույլ է տվել գործը հանգուցալուծել ավելի մեղմ տարբերակով՝ համաձայնությամբ տուգանքով: Հիշեցնենք՝ «Ժողովուրդ» օրաթերթը փետրվարի 19-ին գրել էր, որ Ավետ Կոնջորյանը, 2025 թվականի հուլիսի 7-ից մինչեւ 2026 թվականի հուլիսի 7-ը վարորդական իրավունքից զրկված լինելով, նույն տարվա հոկտեմբերի 15-ին Աբովյանում կրկին մեքենա է վարել եւ կանգնեցվել պարեկների կողմից: Դատարանը նրան մեղավոր է ճանաչել եւ նշանակել 375 հազար դրամ տուգանք՝ մեկ տարվա ընթացքում վճարելու իրավունքով:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

ՀՀ էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը ArmLur.am կայքի հետ զրույցում երեկ մի սենսացիոն հայտարարություն արեց: «Կա ընկերություն, որը Ադրբեջանից բենզին է բերում, եվրոպականի անվան տակ վաճառում: Իրեն խիստ զգուշացվել է՝ կամ դու կհայտարարես, որ ադրբեջանական բենզին ես բերում եւ փողը փոխանցում ես Ադրբեջանին, կամ չես կարողանալու վաճառել այդ բենզինը: Թույլ չենք տալու սուտի հայրենասեր խաղան, սպառողներին խաբեն»,- ասաց նախարարը: «Ժողովուրդ» օրաթերթը հետաքրքրվեց, թե որ ընկերության մասին է խոսքը, սակայն նախարարը հրաժարվեց պատասխանել, փաստեր եւ անուններ ներկայացնել: Այդուհանդերձ, «Ժողովուրդ» օրաթերթը իր կառավարական աղբյուրներից պարզեց, որ նախարարի նկարագրած խարդախության հեղինակ ընկերությունը ՍԻՓԻԷՍ-ն է, որը դիզվառելիքի շուկայում հնաբնակներից է: ՍԻՓԻԷՍ ընկերությունից «Ժողովուրդ» օրաթերթին մեկնաբանություն ստանալ չհաջողվեց: Տեղեկացնենք՝ «Սիփիէս էներջի գրուպ»-ը պատկանում է Աշոտ Սալազարյանին, որը իր բիզնեսը սկսել է 1994 թվականից: Այս ընթացքում ընկերությունների անունները փոխվել են՝ «Քաղ Պետրոլ Սերվիս», «Սիթի Պետրոլ Գրուպ», «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ», «ՍԻՓԻԷՍ ՕԻԼ Քորփորեյշն», սակայն բրենդը նույնն է՝ CPS: Այն վառելանյութի մեծածախ եւ մանրածախ շուկայի խոշոր խաղացողներից է:

ՀՀ ֆինանսների նախարարությունից հայտնել են, որ ստորագրվել են 135 մլն եվրոյի վարկային եւ դրամաշնորհային համաձայնագրեր՝ «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց» ծրագրի ֆինանսավորման համար: Փաստաթուղթը ստորագրել են ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը եւ ՎՎԲ-ի տնօրեն Վերոնիկա Գարսիա դել Արկոն՝ մասնակցությամբ ՀՀ փոխվարչապետ Միեր Գրիգորյանի, կառավարության ներկայացուցիչների, Հայաստանում Գերմանիայի դեսպան Կլաուդիա Բուշի, ԵՄ հանձնակատար Մարթա Կոսի, ինչպես նաեւ Վերականգնման վարկերի բանկի եւ Եվրոպական ներդրումային բանկի ներկայացուցիչների: Ծրագիրը նպատակ ունի զարգացնել տարածաշրջանային էներգետիկ ենթակառուցվածքները եւ ուժեղացնել էլեկտրահաղորդման կապերը Կովկասում:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՐՏՔԸ ՀԱՄԱՐՎՈՒՄ Է ԿԱՌԱՎԱՐԵԼԻ

ArmLur.am-ը զրուցել է ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանի հետ:

-Պարոն Հովհաննիսյան, ամիսներ առաջ ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանն այցելել է Սյունիք, որտեղ քաղաքացիների հետ շփման ընթացքում հայտարարել է, որ Հայաստանում փողի խնդիր չկա: Այս համատեքստում կխնդրեմ անդրադառնաք Հայաստանի արտաքին պարտքին, որը կազմում է ավելի քան 14.5 միլիարդ: Կա՞ կարմիր գիծ, որը չպետք է հատել:

-Կառավարման հետ կապված ունենք կանոններ, որոնցով սահմանված է, թե Կառավարությունը ինչ չափով պարտք կարող է վերցնել: Ավելին, ամեն տարվա բյուջեով սահմանվում է, թե կոնկրետ այդ տարի որքան դեֆիցիտ ունենանք: Այսինքն՝ այդ տարի որքան պարտք պետք է վերցնենք: Այդ կանոնները սահմանում են, որ 60%-ից ավել հնի նկատմամբ պարտք ունենալն արդեն վտանգավոր գիծ է եւ այդտեղ կարող են առաջանալ որոշակի պարտքի կառավարման խնդիրներ: Հայաստանում պարտքը կազմում է 47,3%՝ հնի համեմատությամբ եւ նվազել է, նախորդ տարվա համեմատ, 0,7%-ային կետով: Հայաստանի պարտքը համարվում է կառավարելի, եւ որեւէ խնդիրներ այստեղ չկան, որը նաեւ ապացուցվում է կամ հավաստվում է միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ ռեյտինգային ընկերությունների կողմից Հայաստանի Հանրապետության վարկանիշի բարելավմամբ:

-Քաղաքացիներն իրենց կյանքում, կարծես թե, չեն զգում այդ տարբերությունը:

-Ի՞նչ գիտեք՝ զգում են, թե չէ: Ես վստահ եմ, որ զգում են:

-Քաղաքացիներ շարունակ դժգոհում են՝ աշխատավարձերը չեն բարձրացվում, բայց փոխարենը պարբերաբար գնաճ ենք ունենում:

-Ուրեմն՝ մեր կանոնները ասում են, որ կապիտալ պարտքը պետք է ուղղվի ոչ թե աշխատավարձերի բարձրացմանը, այլ կապիտալ ծախսերի իրականացմանը, այնպիսի ծախսերի, որոնք մեծացնում են մեր պետության տնտեսական պոտենցիալը: Այդ կապիտալ ծախսերից են, օրինակ, պաշտպանունակության վրա ներդրվող ծախսերը, ճանապարհաշինության, ջրամբարաշինության, դպրոցաշինության հետ կապված ծախսերը, որոնք կարող են իրականացվել պարտքի միջոցով, որովհետեւ այդ ներդրումները բավականին բարձր ետգնման կամ ազդեցություն ունեն մեր քաղաքացիների վրա, եւ ես, կարծում եմ, որ մեր քաղաքացիները տեսնում են եւ տեսել են, թե ինչպիսի փոփոխություններ են տեղի ունենում մեր երկրում ենթակառուցվածքների զարգացման տեսանկյունից եւ ոչ միայն դրա տեսնելով է, այլ նաեւ այդ բոլոր փոփոխությունները բարելավում են իրենց տնտեսական գործունեությունը իրականացնելու հնարավորությունները:

-Պարոն Հովհաննիսյան, կրկին վերադառնալով նախագահի հայտարարությանը՝ կխնդրեմ՝ Դուք նշեք՝ Հայաստանը փողի խնդիր ունի՞, թե՞ չէ:

-Մի տեսակ չգիտեմ՝ այդ հարցին ինչպես մոտենամ՝ այն իմաստով, որ եթե անհրաժեշտություն լինի որեւէ տեղ որեւէ ներդրում կատարել, եւ դա խելամիտ լինի, ապա փողի խնդիր ընդհանրապես գոյություն չունի: Հարցը նրա մեջ է, թե այդ փողը ինչի մեջ պետք է ծախսենք: Ինձ թվում է՝ նախագահը այս կոնտեքստում է այս հարցին անդրադարձել՝ ելնելով նրանից, որ եթե կան լավ ծրագրեր, որոնք հանրությանը մեծ օգուտ են բերում, ապա փողի խնդիր մենք չենք կարող ունենալ: Այսինքն՝ չունենք այնպիսի սահմանափակում, որ չենք կարող այդ ներդրումը իրականացնել:

Զրուցեց ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ԴԵՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՑՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

Օմանի մայրաքաղաք Մասկատում մարտի 18-ին տեղի է ունեցել Օմանում Հայաստանի դեսպանության բացման արարողությունը, որին մասնակցել են Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը եւ Օմանի արտաքին գործերի նախարար Սայիդ Բադր բին Համադ ալ Բուսաիդին: Armenpress-ի փոխանցմամբ՝ այս մասին հայտնել է Timesofoman-ը: Նշվում է, որ ՀՀ դեսպանատան բացումը տեղի է ունենում երկու երկրների միջեւ բարեկամության եւ համագործակցության ընդլայնվող հարաբերությունների շրջանակներում: Այն արտացոլում է երկու երկրների համատեղ ձգտումը՝ ընդլայնելու համագործակցության եւ գործընկերության հորիզոնները տարբեր ոլորտներում այնպես, որ դա ծառայի փոխադարձ շահերին եւ խթանի ներդրումների, առեւտրի եւ մշակութային փոխանակման հնարավորությունները:

Միջոցառման ընթացքում ունեցած ելույթում ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը իր հպարտությունն է արտահայտել Օմանի Սուլթանությունում Հայաստանի դեսպանատան բացման կապակցությամբ: Նա ընդգծել է, որ այս քայլը արտացոլում է երկկողմ հարաբերությունների ամրությունը եւ դրանք զարգացնելու համատեղ ցանկությունը՝ ընդլայնելով համագործակցության ոլորտները՝ փոխադարձ շահերին ծառայելու համար:

Հայաստանի արտաքին գործերի նախարարի տեղակալ Վահան Կոստանյանն էլ Օմանի լրատվական գործակալության հետ զրույցում ասել է, որ Օմանի Սուլթանության եւ Հայաստանի միջեւ հարաբերությունները դինամիկ են եւ ընդլայնվող: Կոստանյանն ասել է, որ Օմանը արաբական երկրների շարքում առաջիններից էր, որ դիվանագիտական հարաբերություններ է հաստատել Հայաստանի հետ: ՀՀ ԱԳ փոխնախարարն ընդգծել է, որ երկու երկրների միջեւ հարաբերությունները վերջին երկու տարիների ընթացքում շարունակական աճ են ապրել, որի գագաթնակետը եղել է Օմանում Հայաստանի դեսպանատուն բացելու որոշումը: Բացի այդ, երկու երկրների արտաքին գործերի նախարարությունները շարունակաբար քաղաքական խորհրդակցություններ են անցկացնում: Կոստանյանն ընդգծել է համատեղ համագործակցության տնտեսական կոմպոնենտի կարեւորությունը՝ առանձնացնելով մի քանի առանցքային ոլորտներ, ինչպիսիք են տրանսպորտը, առաջատար տեխնոլոգիաները, արհեստական բանականությունը, ամպային ծառայությունները եւ համատեղ ներդրումները: Վահան Կոստանյանը ցանկություն է հայտնել Հայաստանում Օմանի Սուլթանության պատվիրակություն ընդունել՝ մտքերի փոխանակման համար: Նա նաեւ ընդգծել է համատեղ միջոցառումների, երկու երկրների մասնավոր հատվածի ընկերությունների երկկողմ հանդիպումների անցկացման կարեւորությունը, ինչպես նաեւ կարեւորել է հնարավորությունների ստեղծումը, որոնք թույլ կտան նպաստել տնտեսական կապերի հետագա ամրապնդմանը:

«ՈՒՐԱԽ ԱՎՏՈԲՈՒՍԸ» ԿՐԿԻՆ ՃԱՆԱՊԱՐՀ Է ԸՆԿՆԵԼՈՒ

ArmLur.am-ի տեղեկություններով՝ այս շաբաթ եւ կիրակի Նիկոլ Փաշինյանի գլխավորած «ուրախ ավտոբուսը» կրկին ճանապարհ է ընկնում՝ այս անգամ ուղղություն վերցնելով դեպի Կոտայքի եւ Գեղարքունիքի մարզեր:

Ըստ ArmLur.am-ի աղբյուրների՝ մարզային իշխանությունները արդեն անցել են «պատրաստական ռեժիմի». Աիարոն Սահակյանը, ինչպես նաեւ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը Կոտայքում այս օրերին զբաղված են ակտիվ կազմակերպչական աշխատանքներով՝ փորձելով ապահովել բարձր մակարդակի ընդունելություն վարչապետի համար:

Փաստացի, խոսքը ոչ թե պարզապես աշխատանքային այցերի, այլ ակնհայտ ներկուսակցական մոբիլիզացիայի մասին է, որտեղ վարչական ռեսուրսի կիրառման կասկածներն ավելի ու ավելի են խորանում:

Վերջին շաբաթներին Նիկոլ Փաշինյանը ՔՊ թիմի հետ ակտիվ շրջել է մի շարք մարզերով՝ իրականացնելով ներկուսակցական հանդիպումներ ու «քարոզչական» այցեր, մասնավորապես՝

- Արագածոտնի մարզում
- Արմավիրի մարզում
- Լոռու մարզում
- Շիրակի մարզում
- Սյունիքի մարզում (մասնակի այցեր/հանդիպումներ):

Այս ֆորմատը, ըստ էության, վերածվել է շարունակական մարզային շրջայցերի՝ կուսակցության ներսում դիրքերի ամրապնդման եւ տեղական կառույցների ակտիվացման նպատակով:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ

Սույն թվականի մարտի 19-ին տեղի ունեցավ աշխատանքային հանդիպում Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ)՝ Հայաստանը ներկայացնող խմբի գործադիր տնօրենի տեղակալ Մարնիքս ֆոն Ռայի եւ Հայաստանը ներկայացնող խմբի գործադիր տնօրենի խորհրդական Հայկազ Իգիթյանի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվեցին ֆինանսավարկային համակարգի զարգացմանը, ոլորտային բարեփոխումներին եւ միջազգային լավագույն փորձի ներդրմանը վերաբերող մի շարք առանցքային հարցեր: Անդրադարձ կատարվեց նաեւ խորհրդարանի դերին՝ բարեփոխումների ընդունման եւ դրանց շարունակականության ապահովման գործընթացում: Միաժամանակ ընդգծվեց ԱՄՀ-ի հետ խորհրդարանի համագործակցության ինստիտուցիոնալացման անհրաժեշտությունը՝ որպես արդյունավետ եւ կայուն գործընկերության կարեւոր բաղադրիչ:

ՀԲԱԺԱՐԱԿԱՆԻ ԴԻՄՈՒՄ

«Ազգային Ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 155-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի պատգամավոր Վլադիմիր Վարդանյանը 2026 թվականի մարտի 19-ին հրաժարականի դիմում է ներկայացրել: Այս մասին տեղեկանում ենք ԱԺ կայքից: «Ազգային Ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 155-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե հրաժարականի հրապարակումից հետո՝ մեկ շաբաթվա ընթացքում, պատգամավորը գրավոր դիմումով հետ է վերցնում հրաժարականի մասին իր դիմումը, ապա Ազգային Ժողովի նախագահն այդ մասին հանդես է գալիս հայտարարությամբ, եթե հետ չի վերցնում հրաժարականի մասին իր դիմումը, ապա նրա լիազորությունների դադարման մասին կազմվում է արձանագրություն, որը ստորագրում եւ հրապարակում է Ազգային Ժողովի նախագահը: Արձանագրության հրապարակման պահից հրաժարականը համարվում է ընդունված:

ՉԵՌՆՊԱՀ ԵՆ

ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցության ղեկավար Հայկ Մամիջանյանը կարճ տեսաուղերձ է հրապարակել Բրյուսելից, որտեղ արդեն ավարտվել է Հայաստանի խորհրդարանի եւ Եվրոպայի խորհրդարանի համագործակցության ձեւաչափի հերթական նիստը, որի ընթացքում ընդունվել է հայտարարություն: «Այս հայտարարության հետ կապված՝ մի քանի տեղեկացում ունեմ ձեզ, որովհետեւ քարոզչամեքենան հաստատ դրա մասին չի խոսի: Ես ներկայացրել էի շուրջ 6 առաջարկ այդ հայտարարությանը, որի մեծամասնությունն իհարկե չընդունվեց, բայց էական է 2-ի վերաբերյալ հայկական կողմի քվեարկությունը: Առաջարկներից մեկը՝ կոչ անել Ադրբեջանի իշխանություններին զերծ մնալ ՀՀ ներքին հարցերի վերաբերյալ հայտարարություններ անելուց, դա վերաբերվում էր Սահմանադրության փոփոխությանը եւ այլն: ՔՊ պատգամավորները սրան ձեռնպահ քվեարկեցին, իրենց համար մեկ է՝ Ադրբեջանը կարծիք կհայտնի՞ Հայաստանի Սահմանադրության փոփոխության մասին, թե՞ չէ»,- իր տեսաուղերձում նշեց Հայկ Մամիջանյանը:

ՎԵՐԱԴԱՐՁՎԵԼ Է

ՇՈՒՐՋ 773 ՄԻԼԻՈՆ ԴՈԼԱՐԻ ԳՈՒՅՔ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑ

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը երեկ Կառավարության նիստում անդրադարձել է նիստի օրակարգում ներառված՝ 417 միլիոն 659 հազար դրամ արժեքով, 7090 քմ մակերեսով անշարժ գույքը Շրջակա միջավայրի նախարարությանն ամրացնելու նախադասմությանը, ինչպես նաեւ 2018-2025 թվականներին Հայաստանի Հանրապետությանը վերադարձված գույքերի եւ դրամական միջոցների մանրամասներին, ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով հաշտություններին եւ Սեւանա լճի՝ բացարձակ նիշից ցածր տարածքներում օրենքի խախտմամբ օտարված կամ վարձակալության հանձնված գույքերը պետությանը վերադարձնելու աշխատանքներին:

Աննա Վարդապետյանը, մասնավորապես, նշել է. «Գլխավոր դատախազությունը 2025 թվականի նոյեմբերի 27-ին տեղեկացրել էր, որ Հայաստանի Հանրապետության սեփականության իրավունքն է գրանցվել Երեւան քաղաքի Գ.Հովսեփյան փողոցի հեռուստաաշտարակին հարող տարածքում գտնվող՝ 1 միլիոն 107 հազար ԱՄՆ դոլարին համարժեք 417 միլիոն 659 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով, 7090 քմ մակերեսով (0,709 հա) հողամասի նկատմամբ: Գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության՝ այս գույքի վերաբերյալ հայցադիմումը Հակակոռուպցիոն դատարանի կողմից բավարարվել էր 2025 թվականի մարտի 7-ի վճռով: Դատախազությունը դատարանից հայցել էր անվավեր ճանաչել Երեւանի քաղաքապետի եւ ֆիզիկական անձի միջեւ 2005 թվականի հուլիսի 21-ին կնքված առուվաճառքի պայմանագիրն ու կիրառել անվավերության հետեւանքներ: Ամփոփելով նշեմ, որ Կառավարության նախորդ որոշումներով՝ հեռուստաաշտարակին հարող տարածքում գտնվող եւս 5 հողամաս է ամրացվել Շրջակա միջավայրի նախարարությանը: Այսպիսով, այսօրվա դրությամբ Շրջակա միջավայրի նախարարությանն է ամրացվել Երեւան քաղաքի Գ.Հովսեփյան փողոցի հեռուստաաշտարակին հարող տարածքում գտնվող՝ ընդհանուր 3 միլիարդ 381 միլիոն 573 հազար դրամ շուկայականին մոտարկված կադաստրային արժեքով, շուրջ 7.5 հա մակերեսով 6 հողամաս»:

«Գլխավոր դատախազությունը 2023 թվականի օգոստոսի 29-ին ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցադիմում էր ներկայացրել Հակակոռուպցիոն դատարան՝ ընդդեմ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի նախկին ղեկավար Կարապետ Գուլոյանի օգնական Մանուկ Հակոբյանի եւ նրա կնոջ: Հիշեցնեմ, որ Աբովյան համայնքի նախկին ղեկավար Կարապետ Գուլոյանի վերաբերյալ Հակակոռուպցիոն կոմիտեում քննվող քրեական դատախազի կողմից հաստատված մեղադրական եզրակացությամբ, դատարան է հանձնվել 2025 նոյեմբերի 6-ին: Հայցապահանջում ներառված մյուս գույքերի բռնագանձման պահանջի մասով քաղաքացիական գործի քննությունը շարունակվում է»,- նշել է հանրապետության գլխավոր դատախազն ու հավելել, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման լիազորության շրջանակում այս պահի դրությամբ կնքվել է հաշտության 10 համաձայնություն:

Աննա Վարդապետյանն իր ելույթում անդրադարձել է նաեւ 2018-2025 թթ. Հայաստանի Հանրապետությանը վերադարձված գույքերին ու դրամական միջոցներին. «Դատախազությունում վերլուծվել են 2018-2025 թթ.՝ քրեական վարույթներով, դատարաններում ավարտված գործերով, պետական եւ համայնքային շահերի պաշտպանության հայցերով ու հաշտություններով, դատախազական ներգործության միջոցներով, իսկ 2023 թվականից՝ նաեւ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործիքակազմի կիրառման արդյունքում, Հայաստանի Հանրապետության եւ համայնքների սեփականությանը կամ տիրապետմանը վերադարձված գույքերի եւ դրամական միջոցների ցուցանիշները: Ըստ այդ ցուցանիշների՝ 2018-2025 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետության եւ համայնքների սեփականությանը կամ տիրապետմանն է վերադարձվել շուրջ 291 միլիարդ 726 միլիոն դրամի (շուրջ 773 միլիոն դոլարի) գույք եւ դրամական միջոց, որից 65.8%-ը կամ շուրջ 193 միլիարդ դրամի (շուրջ 504 միլիոն դոլարի) գույքն ու դրամական միջոցը՝ 2023-2025 թթ.»:

Գլխավոր դատախազն իր խոսքն ամփոփել է Սեւանա լճի ափամերձ՝ բացարձակ նիշից ցածր տարածքներում օրենքի խախտմամբ օտարված կամ վարձակալության հանձնված գույքերի վերաբերյալ տվյալներով. «Գլխավոր դատախազությունը հայտարարել է, որ մեկնարկել են Սեւանա լճի ափամերձ տարածքներում օրենքի խախտմամբ օտարված կամ վարձակալության հանձնված գույքերը պետությանը վերադարձնելու աշխատանքները: 2025 թվականի դեկտեմբերից առ այսօր՝ Դատախազության միջնորդագրերի կատարման արդյունքում, Սեւանա լճի ափամերձ՝ բացարձակ նիշից ցածր 33 հողամասերում ապամոնտաժվել (քանդվել) է տարբեր անձանց կողմից ապօրինի կառուցված՝ հիմնական եւ ոչ հիմնական 83 շենք-շինություն, «Սեւան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից լուծվել (դադարեցվել) է 2 պայմանագիր»:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԽՈՐԱՆՈՒՄ ԵՆ

ՀՀ-ում մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ Հայաստանում խորանում են ճնշումները. ընդդիմությունն ահազանգում է իշխանությունների քայլերի մասին: Ամերիկյան ազդեցիկ Intelligence Online կայքը Մեթ Բեռնարդինիի հեղինակությամբ դեռեւս հունվարի 22-ին (2026թ.) հրապարակել է հոդված՝ Armenian opposition steps up US lobbying amid crackdown in Yerevan, Հայաստանում ահագնացող մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ: Հայաստանի արեւմտամետ Ազգային-ժողովրդավարական բեւեռը, նպատակ ունենալով ամրապնդել ժողովրդավարական հաստատությունները Հայաստանում, շարունակում է իր լոբբիստական գործունեությունը Միացյալ Նահանգներում: ԱԺԲ-ն ահազանգում է Հայաստանում մարդու իրավունքների խախտումների՝ հատկապես Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու (ՀԱՍԵ) նկատմամբ հարձակումների սաստկացման, ազատ խոսքի սահմանափակման եւ առաջիկա ընտրությունների հնարավոր կեղծման վտանգի մասին: Հայաստանի իշխանությունները շարունակում են խորացնել ներքաղաքական ճնշումները՝ սահմանափակելով ազատ խոսքը, ոտնահարելով մարդու իրավունքները եւ թիրախավորելով հատկապես ազգային արժեքներն ու հաստատությունները: Այս ամենը հաշվի առնելով՝ Ազգային-ժողովրդավարական բեւեռը (ԱԺԲ) մեծ ջանքեր է գործադրում Վաշինգտոնում՝ փորձելով միջազգային հանրության ուշադրությունը հրավիրել իրավիճակի լրջության վրա:

ԿԱՋԱԿՑԵՆ

«Մենք կաջակցենք Հայաստանին հիբրիդային սպառնալիքների դեմ պայքարում»,- այս մասին երեկ Երեւանում ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի հետ համատեղ հայտարարությունների ընթացքում ասաց աշխատանքային այցով Երեւանում գտնվող ԵՄ ընդլայնման հարցերով հանձնակատար Մարթա Կոսը: Նրա խոսքով՝ այս տարին կարեւոր է ոչ միայն այն տեսանկյունից, որ Երեւանում մայիսին կայանալու է Եվրոպական քաղաքական համայնքի, ինչպես նաեւ ՀՀ-ԵՄ գագաթնաժողովը, այլեւ՝ հայկական ժողովրդավարության համար: «Հունիսին Հայաստանում կկայանան ընտրություններ, Եվրոպայի տարբեր երկրներում մենք ամեն օր տեսնում ենք, թե ինչպես են չարամիտ դերակատարներ փորձում խաթարել ժողովրդավարական գործընթացները կիբերհարձակումների, ապատեղեկատվության եւ այլ միջամտությունների միջոցով: Եվրոպան այստեղ է՝ աջակցելու համար, մենք կաջակցենք հիբրիդային սպառնալիքների ու ապատեղեկատվության դեմ պայքարում, որպեսզի հայերը, Հայաստանի քաղաքացիները կարողանան ազատ եւ արդար պայմաններում քվեարկել եւ ինքնուրույն որոշել իրենց երկրի ապագան»,- ասաց Մարթա Կոսը:

ՓԱԿ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Ի՞ՆՉ ՀՐԱՀԱՆԳՆԵՐՈՎ ՎԵՐԱԴԱՐՁԱՎ ՔԿ ՆԱԽԱԳԱՀԸ

Երեկ Կառավարության նիստի ավարտից հետո ՀՀ արդարադատության նախարար Սրբուհի Գալյանի հետ միասին շենքից հեռանում էր Քննչական կոմիտեի նախագահ Արթուր Պողոսյանը:

ArmLur.am-ի լրագրողի ուշադրությունից չվրիպեց մի ուշագրավ դրվագ. Պողոսյանը կարճ ժամանակ անց կրկին վերադարձավ Կառավարության շենք եւ բարձրացավ վերեւ՝ հանդիպելու վարչապետ Նիկոլ Փաշինյանին:

Հաշվի առնելով վարչապետի երեկվա կտրուկ եւ լարված վարքագիծը թե՛ լրագրողների, թե՛ քաղաքական հակառակորդների նկատմամբ, չի բացառվում, որ այս հանդիպման ընթացքում քննարկվել են նոր ցուցումներ՝ իրավապահ համակարգի գործողությունների հետ կապված: Մասնավորապես, քաղաքական շրջանակներում արդեն հնչում են ենթադրություններ, որ Քննչական կոմիտեին կարող են փոխանցված լինել առավել կոշտ եւ ագրեսիվ գործելաոճի վերաբերյալ նոր ուղենիշներ:

Հիշեցնենք, որ նույն օրը Նիկոլ Փաշինյանը լրագրողների հետ շփման ընթացքում աչքի ընկավ հարձակողական տոնով հարցուպատասխանով, ինչից հետո նաեւ ուղիղ եթերի ընթացքում տարօրինակ հայտարարություններով հանդես եկավ: Վարչապետը, մասնավորապես, «Ուժեղ Հայաստան» թիմի ներկայացուցիչներին առաջարկեց «ժիմ անել» 30 անգամ կամ ուղիղ եթերում պատասխանել, թե որն է Իսպանիայի մայրաքաղաքը:

Այս զարգացումների համատեքստում քաղաքական դաշտում ձեւավորվում է մտահոգություն, որ առաջիկայում, հնարավոր է, ականատես լինենք նոր գործընթացների, որոնք որոշ շրջանակներ արդեն բնորոշում են որպես քաղաքական ճնշումների նոր հերթական փուլ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

«ՆՈՐ ՍԵՊՏԵՄԲԵՐՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ»

«Խաղաղության ռեւիզիայի դիրքերից հանդես եկող ուժերը պատրաստում են նոր սեպտեմբերյան պատերազմ», - լրագրողների հետ ճեպազրույցում հայտարարեց վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

«Ինչ վերաբերում է պատերազմի կուսակցությանը, ամեն օրվա հետ ինձ համար դառնում է ավելի ակնհայտ, որովհետեւ այդ կուսակցությունները եւ այդ շրջանակները առաջինն ասում են, որ իրենք դեմ չեն խաղաղությանը, երկրորդը՝ սկսում են խոսել, որ իրենց իշխանության գալու պարագայում սկսելու են վերանայել խաղաղությունը: Դա ես շատ ուղիղ, առանց սեթեւեթանքի ուզում եմ ասել, որ պատերազմ է Հայաստանի Հանրապետության ոչ միայն տարածքային, այլեւ ինքնիշխանության կորստով: Նրանցից ոմանք, ըստ ամենայնի, չեն էլ հասկանում՝ ինչ են ասում, որովհետեւ այն տեքստերը, որ իրենք արտասանում են, ինձ համար ակնհայտ է, որ ուրիշ տեղեր են գրված, եւ նրանք պարզապես կարդացողի կարգավիճակում են», - ասաց Փաշինյանը:

«Այդ բոլոր ուժերը հանդես են գալիս խաղաղության ռեվիզիայի դիրքերից, ինչն այդ փաստի բերումով նշանակում է անխուսափելի պատերազմ, ընդ որում, ընտրություններից շատ չանցած՝ մաքսիմալ աշնանը: Այդ բոլոր ուժերը, հստակ՝ մի մասը, ենթադրում եմ, չի էլ հասկանում՝ ինչ է ասում,- ասաց վարչապետը եւ հավելեց,-այդ բոլոր ուժերը պատրաստում են նոր սեպտեմբերյան պատերազմ՝ ծանր հետեւանքներով»:

Փաշինյանը նշեց, որ առաջիկա ընտրություններում ակնկալում են սահմանադրական մեծամասնություն: «Մենք ասում ենք, որ ակնկալում ենք, որ այս ընտրությունների արդյունքում ունենանք սահմանադրական մեծամասնություն, որովհետեւ սահմանադրական մեծամասնությունն է, որ կերաշխավորի, որ այն պրոցեսները, տարածաշրջանային խաղաղության համատեքստում, մենք կդարձնենք անշրջելի», - մասնավորապես նշեց նա: Անդրադառնալով նրան, որ ԵՄ-ն ապրիլին փորձագետների խումբ կուղարկի Հայաստան՝ դիմակայելու հիբրիդային սպառնալիքներին, Նիկոլ Փաշինյանն ասաց. «Մենք համագործակցում ենք բոլոր այն գործընկերների հետ, որոնք ունեն գործիքներ հիբրիդային պատերազմի եւ մասնավորապես ապատեղեկատվության դեմ պայքարի»:

«Հիբրիդային պատերազմն այն է, երբ վճարովի գործիքներով, ներառյալ արհեստական բանականության կիրառմամբ գրվում է, որ ես Դուբայում տուն ունեմ, Ֆրանսիայում տուն ունեմ, որ իմ ընտանիքի անդամները տարբեր երկրներում բնակարաններ, բիզնեսներ ունեն, Հայաստանում բիզնեսներ ունեն, միլիոններ ունեն շվեյցարական բանկերում, որ մենք օրգաններ ենք վաճառում», - նշեց Փաշինյանը: Անցած դեկտեմբերին Բրյուսելի նախարարությունից հայտնել էին, որ պատրաստվում են 12 միլիոն եվրոյի աջակցություն տրամադրել Երեւանին, որ օգնեն «ընտրություններին ընդառաջ հակահարված տալու ռուսական ապատեղեկատվության դեմ»: Ավելի ուշ արդեն Եվրամիության արտգործնախարար Կալլասը հայտնել էր, որ հենց Երեւանն է դիմել աջակցության խնդրանքով:

«Անկախության հռչակագրի եւ մեր Սահմանադրության խնդիրը մեր ներքին խնդիրն է, - երեկ լրագրողների հետ ճեպազրույցում հայտարարեց վարչապետ Նիկոլ Փաշինյանը եւ հավելեց,- դա անհրաժեշտ է մեզ եւ ոչ թե ուրիշներին, մեզ աշխարհում ճիշտ դիրքավորելու համար»: «Անկախության հռչակագիրը ոչ թե անկախության հռչակագիր է, դա կոնֆլիկտի հռչակագիր է ու արդյունքում կախվածության հռչակագիր է: Պատկերացրեք տեղափոխվել եք նոր բնակարան եւ սպառնում եք ձեր հարեւաններին՝ այդպիսով հռչակելով նաեւ անկախություն, ո՞նց եք այդ սպառնալիքների պայմաններում ապրելու այդ միջավայրում, միայն արտաքին օգնությամբ, իսկ արտաքին օգնություն ակնկալելը դնելու է շարունակաբար մեծացող, ահագնացող կախվածության մեջ նրանցից, ումից այդ օգնությունը ակնկալում եք», - ասաց Փաշինյանը:

Վարչապետն ընդգծեց՝ Սահմանադրության եւ Անկախության հռչակագրի հարցը ներքին օրակարգի հարց է. «Մենք դա արտաքին որեւէ ուժի հետ չենք քննարկել, չենք քննարկում եւ չենք քննարկելու»: Նիկոլ Փաշինյանը նշեց, որ Սահմանադրության հետ կապված իրավաբանական աշխատանքն ավարտված է. «Ես գիտեմ, որ Սահմանադրական հանձնաժողովի նիստեր են եղել, գիտեմ, որ Սահմանադրական հանձնաժողովի ոչ բոլոր անդամներն են, որ պարտաճանաչ մասնակցել են: Մենք չենք կարող այդ մասշտաբային պրոցեսը թողնել ուղղակի սուբյեկտիվ ընկալումների: Դա լրջագույն ռազմավարական հարց է, ու իհարկե կառավարող ուժը, որը ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացիների մանդատը՝ կառավարելու Հայաստանի Հանրապետությունը պետք է այդ հարցերով զբաղվի լրջորեն, եւ ես էլ անձամբ զբաղվում եմ»:

Որ մայր օրենքում Հայաստանի հռչակագրի մասին հիշատակում չլինի ու Սահմանադրությունը փոխվի, Բաքուն է պահանջում: Հռչակագրում նշվում է Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի միավորման մասին, ու սա տարածքային նկրտում են համարում: Սահմանադրական դատարանը քննել ու որոշել է, որ տարածքային պահանջ չկա այնտեղ: Փաշինյանն էլ այդ որոշմանը հղում անելով Բաքվին հավաստիացնում էր՝տարածքային պահանջ չկա, բայց Իլհամ Ալիեւը չնահանջեց, ու հիմա Նիկոլ Փաշինյանն ուղիղ հայտարարում է. «Սա կոնֆլիկտի հռչակագիր է ու եթե մենք գնում ենք այդ ճանապարհով, ուրեմն կոնֆլիկտն անխուսափելի է»:

ԼՈՒՐԵՐ

ՈՒՂԱՐԿՎԵԼ Է

Ազգային Ժողովի «Քաղաքացիական խմբակցության» ղեկավար Հայկ Կոնջորյանի, Կոտայքի փոխմարզպետ, ՔՊ-ական Հայկ Մկրտչյանի եւ Աբովյան համայնքի ղեկավար Էդուարդ Բաբայանի վերաբերյալ «Հետքի» հրապարակումն ուսումնասիրվել է գլխավոր դատախազությունում: Ուսումնասիրության արդյունքներով՝ հրապարակումն ուղարկվել է Հակակոռուպցիոն կոմիտե՝ քրեական վարույթի հարցը լուծելու նպատակով: Այս մասին տեղեկացանք դատախազության հանրային կապերի բաժնից:

Ավելի վաղ դատախազությունը Կոնջորյանի առանձնատան գնման գործարքի վերաբերյալ հրապարակումն ուղարկել էր Հակակոռուպցիոն կոմիտե՝ օպերատիվ ստուգման: «Հետքը» 2025թ. դեկտեմբերին գրեց, որ Հայկ Կոնջորյանն առանձնատուն է գնել շուկայականից ցածր գնով, իսկ 2026թ.-ի մարտին հրապարակեցինք, թե ինչպես են Առինջ համայնքի հողերը շուկայականից բազմապատիկ էժան օտարվել Կոնջորյանին առանձնատուն վաճառած ընկերության սեփականատիրոջը:

Ավելին, պարզել էինք, որ Աբովյանի քաղաքային զբոսայգու մի մասը եւս սեփականաշնորհվել է եւ վաճառվել նույն կառուցապատողին: Զբոսայգին օտարվել էր Աբովյանի համայնքապետ Էդուարդ Բաբայանի ընտանիքի անդամներին (2012-2016թթ.), հետո փոխանցվել էր Հայկ Կոնջարյանի հետ կապվող գործարարին:

2026 թվականի մարտի 5-ին՝ Կառավարության նիստից հետո տեղի ունեցած ճեպազրույցում անդրադառնալով մամուլում պաշտոնյաների մասին կոռուպցիոն հրապարակումներին, վարչապետ Նիկոլ Փաշինյանը նշել էր. «Ընդհանրապես, պետական իշխանության համակարգում, Կառավարության համակարգում գործում է աշխատանքային խումբ, ով պաշտոնյաների հնարավոր ոչ օրինական, ոչ իրավական գործողությունների վերաբերյալ հրապարակումներն ուղարկում է իրավապահ մարմիններին: Բացառված է, որ մեր իրականության մեջ որեւէ պաշտոնյայի կողմից ապօրինություն իրականացնելու վերաբերյալ տեղեկատվություն լինի եւ դա համապատասխան մարմինների կողմից քննության չարժանանա»:

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է

Ապօրինի պահվող զենք-զինամթերքը կամավոր հանձնելուն ուղղված ոստիկանության բացատրական աշխատանքները շարունակվում են: Մարտի 10-ին Կոտայքի պարեկների բացատրական աշխատանքի արդյունքում օպերատիվ կառավարման կենտրոն զանգած քաղաքացին հայտնել է, որ զենք-զինամթերք է թողնում Հրազդանի Կաքավաձոր թաղամասում: Նշված վայրում հայտնաբերվել է «Կալաշնիկովի» ինքնաձիգ, ողորկափող հրացան, երկու ատրճանակ, մոտ 600 փամփուշտ եւ զինամթերք: Մարտի 13-ին Շիրակի մարզի պարեկների բացատրական աշխատանքի արդյունքում 112 զանգած քաղաքացին տեղեկացրել է, որ զենք-զինամթերք է թողել Երազգավորս-Գետք ավտոճանապարհին:Հայտնաբերվել է ատրճանակ, տարատեսակ 71 փամփուշտ եւ զինամթերք:

● *Մարտի 18-ից 19-ը հանրապետությունում բացահայտվել է 148 հանցագործություն, որոնցից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՉԱԽՈՂՎԵԼ Է

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում եմ արել, թե 2026թ. ավարտվող «300 դպրոց, 500 մանկապարտեզ» պետական ծրագրով մարզում հանրակրթական քանի՞ դպրոցի, մանկապարտեզի շենք է կառուցվել, քանիսի՞ շինարարությունն է ընթացքի մեջ, քանի՞ դպրոցի ու մանկապարտեզի շենք է նորոգվել եւ նորոգվում է: Տավուշի մարզպետի աշխատակազմից պատասխանել են. «Մարզում շահագործման են հանձնվել Կիրանցի եւ Գանձաքարի նորակառույց դպրոցները, ընթացքի մեջ են Լուսաձորի, Բագրատաշենի, Պռղավանի, Այրումի, Նորաշենի, Նավուրի, Աղավնավանքի եւ Դովեղի նորակառույց դպրոցները: Կառուցվել է եւ շուտով կշահագործվի Բագրատաշենի նորակառույց մանկապարտեզը, ընթացքի մեջ է Կողբի նոր մանկապարտեզը: Ծրագրի շրջանակներում մարզում վերանորոգվում են 8 դպրոցի եւ 15 մանկապարտեզի առկա շենքեր, որոնք ունեն սեյսմակայուն նկարագիր»: «300 դպրոց, 500 մանկապարտեզ» պետական ծրագիրը ձախողվել է դրանում ընդգրկած դպրոցների ու մանկապարտեզների թվի եւ դրանց կառուցման, նորոգման ժամկետների խախտման առումներով:

ՏԽՈՒՐ ՊԱՏԿԵՐ

Հայաստանի գյուղատնտեսությունը տխուր պատկեր ունի. բերքը, ինչպես դարեր առաջ, կախված է «երկնքի ծերից»՝ կարկտահարությունից: Տավուշի 4 համայնքներից միայն Նոյեմբերյանում են հակակարկտային 14 կայաններ տեղադրված, Բերդ, Դիլիջան, Իջեւան համայնքներում հակակարկտային կայաններ չկան: Նիկոլ Փաշինյանի իշխանության 8 տարում Տավուշում հակակարկտային կայան չի տեղադրվել: Իշխանությունը վերացրեց գյուղատնտեսության նախարարությունը: Էկոնոմիկայի նախարարության կազմում գործում են բուսաբուծության, անասնաբուծության, գյուղատնտեսական խորհրդատվության եւ նորարարությունների, ագրովերամշակման, գյուղատնտեսական ծրագրերի նախագծման, գյուղատնտեսական ծրագրերի իրականացման վարչությունները: Էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանին հարցում եմ արել, թե երբ է նախատեսված Հայաստանում ներդնել գյուղատնտեսության պարտադիր ապահովագրություն: Նախարարությունից հայտնել են. «ՀՀ գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030թթ. ռազմավարության «Դիվերսիֆիկացում եւ ռիսկերի կառավարում» սկզբունքում եւ «Բարձրացնել գյուղատնտեսության ոլորտի մրցունակությունը եւ արդյունավետությունը» առաջնահերթությունում կարեւորվում է ապահովագրական համակարգի աստիճանական ներդրումը: 2019 թ-ից մեկնարկել է գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման պետական աջակցության փորձնական ծրագիրը, որի հիմնական նպատակն է գյուղատնտեսության ապահովագրության մեխանիզմների հստակեցումը եւ ամբողջական համակարգի ներդրումը: Փորձնական ծրագիրը դեռեւս իրականացվում է, հանրապետության ընդհանուր տարածքում գյուղատնտեսական պարտադիր ապահովագրության ներդրման ժամկետները դեռեւս հստակ չեն»:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ԱՌԱՆՑ ԳՈՒՅՔԻ, ԲԱՅՑ ՄԻԼԻՈՆԱՎՈՐ ԴՐԱՄՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՄԲ

Armlur.am-ը ուսումնասիրեց Կրթության տեսչական մարմնի ղեկավար Վաղարշակ Մատիկյանի՝ 2024 թվականի տարեկան հայտարարագիրը՝ համադրելով այն նրա պաշտոնի ստանձման պահին ներկայացված տվյալների հետ:

Վաղարշակ Մատիկյանը պաշտոնին նշանակվել է 2023 թվականի փետրվարի 6-ին: Պաշտոնը ստանձնելու պահին նրա հայտարարագիրը բավական համեստ է եղել՝ հիմնականում ներառելով փոքր գումարների բանկային միջոցներ եւ սահմանափակ եկամուտներ:

Ըստ Armlur.am-ի ուսումնասիրության՝ 2024 թվականի հայտարարագրով Մատիկյանը չի հայտարարագրել անշարժ գույք եւ տրանսպորտային միջոց: Միեւնույն ժամանակ, նրա ֆինանսական միջոցները որոշակի աճ են արձանագրել: Մասնավորապես՝

- Բանկային ավանդ՝30,000 դրամ,
- Բանկային հաշիվների մնացորդներ՝ 3,078 ԱՄՆ դոլար եւ 2,575,481 դրամ,
- Կանխիկ դրամ՝ 2,100,000 դրամ:

Հաշվետու տարվա ընթացքում նրա եկամուտը կազմել է 14,548,206 դրամ՝ ստացված Կրթության տեսչական մարմնից աշխատավարձի տեսքով:

Բացի այդ, նա ունի նաեւ վարկային պարտավորություն՝ 514,584 դրամի չափով: Համեմատության համար՝ 2023 թվականի հայտարարագրով, որը ներկայացվել է պաշտոնի ստանձնման պահին, Մատիկյանի ֆինանսական վիճակը էապես ավելի համեստ է եղել: ArmLur.am-ը պարզեց, որ այդ պահին նա ունեցել է՝

- Բանկային ավանդ՝ 32,198 դրամ,
- Բանկային հաշիվներ՝ 307,883 դրամ, 840 դրամ եւ 8 դրամ,
- Կանխիկ միջոցներ՝700,000 դրամ,
- Էլեկտրոնային հաշիվ եւ կրիպտոարժույթ՝633 դրամ,
- Եկամուտ՝271,000 դրամ, որը ստացվել է կրթական հաստատություններում աշխատելու արդյունքում:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԴԻՄԵԼ Է ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Ռուբեն Վարդանյանի կնոջ՝ Վերոնիկա Ջոնաբենդի նամակը ԿԽՄԿ նախագահ Միրյանա Սպոլյարիչ Էգերին՝ Ադրբեջանում հայ գերիների իրավական կարգավիճակի մասին: Բաքվում պահվող հայ գերիների հարազատներն ավելի քան երկու տարի զրկված են նրանց տեսնելու հնարավորությունից: Ընտանիքները խորապես մտահոգված են նրանց առողջական վիճակով: Հայ գերիներին անկախ հասանելիություն վերջին անգամ ունեցել են Կարմիր խաչի միջազգային կոմիտեի ներկայացուցիչները: ԿԽՄԿ-ն միակ կազմակերպությունն էր, որն այցելում էր նրանց պահման վայրերում, սակայն 2025 թվականի սեպտեմբերի 3-ին դադարեցրել է գործունեությունն Ադրբեջանում՝ այդ երկրի կառավարության պահանջով:Այս պայմաններում բանտարկյալների իրավական կարգավիճակի հարցը՝ այն իմաստով, որով այն դիտարկում է միջազգային հումանիտար իրավունքը, հատուկ նշանակություն է ստանում: Հենց այս հարցի հետ կապված պարզաբանում ստանալու խնդրանքով էլ Վերոնիկա Ջոնաբենդը դիմել է Կարմիր խաչի միջազգային կոմիտեի նախագահ Միրյանա Սպոլյարիչ Էգերին: Մենք հրապարակում ենք նամակը եւ կրկնում խնդրանքը՝ պարզաբանում տրամադրելու հայ բանտարկյալների իրավական կարգավիճակի վերաբերյալ այն ժամանակահատվածի համար, երբ ԿԽՄԿ ներկայացուցիչներն այցելում էին նրանց, եւ դիտարկելու այս հարցին պատասխանելու հնարավորությունը:

«Հարգելի՜ նախագահ, Ձեզ եմ գրում իմ ամուսնու՝Հայաստանի քաղաքացի, բարերար եւ Լեռնային Ղարաբաղի նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանի անունից, ում Ադրբեջանի իշխանություններն ապօրինի կալանավորել են 2023-ի սեպտեմբերի 27-ին՝ Լեռնային Ղարաբաղից Հայաստան անցնելու ժամանակ:

Ցանկանում եմ իմ անկեղծ գնահատանքը հայտնել Կարմիր Խաչի միջազգային կոմիտեի գործունեության առնչությամբ: ԿԽՄԿ-ի դերը եւ մանդատն իսկապես բացառիկ ու աննախադեպ են: Դաժանությունների, պատերազմների եւ անարդարության ժամանակներում ԿԽՄԿ-ն մնում է արժանապատվության, կարեկցանքի եւ մարդկայնության հազվագյուտ խորհրդանիշ՝ իրականացնելով խոցելի մարդկանց պաշտպանելու ազնիվ առաքելություն: ԿԽՄԿ-ն միջազգային այն փոքրաթիվ կազմակերպություններից է, որի անդամները չեն կորցրել իրենց առաքելության զգացումն ու շարունակում են սրտացավությամբ եւ հոգատարությամբ վերաբերվել իրենց աշխատանքին: Մենք անկեղծորեն գնահատում ենք Կարմիր Խաչի ներկայացուցիչների այցերը Ռուբենին՝ադրբեջանական կալանավայրում: Մեր եւ, վստահ եմ, կալանավորված մյուս հայերի ընտանիքների համար ձեր այցելությունները շատ ավելի մեծ նշանակություն ունեն, քան պարզապես պաշտոնական ընթացակարգ լինելը:

Գրում եմ Ձեզ՝ ԿԽՄԿ-ի մարդասիրական մանդատի, գաղտնիության, անաչառության եւ չեզոքության՝վաղուց ի վեր հաստատված սկզբունքների լիակատար գիտակցումով: Միեւնույն ժամանակ, ապօրինի կալանավորվածների ընտանիքների համար չափազանց կարեւոր է իմանալ, թե Ադրբեջանում ԿԽՄԿ ներկայացուցիչների այցելությունների պահին իրավական ինչ կարգավիճակ են ունեցել իրենց հարազատները:

Պարզաբանման անհրաժեշտությունն առավել հրատապ է դառնում Ադրբեջանում ակնհայտորեն թերի դատական վարույթների լույսի ներքո՝ հաշվի առնելով հիմնարար երաշխիքներից զուրկ դատավարությունները եւ փաստական ու իրավական հիմքերից զուրկ մեղադրանքները: Ապօրինի կալանքի եւ անհիմն դատավարությունների պատճառով նրանց ընտանիքներին հասցված տառապանքն ավելի է խորանում, երբ ադրբեջանական իշխանություններն այդ մարդկանց հրապարակային ձեւով ու պարբերաբար անվանում են «ահաբեկիչներ»՝խեղաթյուրելով կալանավորվածների կարգավիճակը եւ տարածելով ապակողմնորոշող տեղեկություններ:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ ամենայն հարգանքով, խնդրում եմ պարզաբանել այն կոնկրետ իրավական կարգավիճակը, որի հիման վրա ԿԽՄԿ պատվիրակները այցելել են Ռուբենին եւ մյուս հայ բանտարկյալներին: Մասնավորապես, մենք փորձում ենք հասկանալ՝արդյո՞ք ԿԽՄԿ-ն նրանց դիտարկել է իբրեւ ազատությունից զրկված անձանց, որոնց ազատությունից զրկելը կապված է եղել զինված հակամարտության հետ, ըստ այդմ՝ նրանք դիտարկվել են որպես ռազմագերիներ՝ն՞ թե, անվտանգության նկատառումներով կալանավորվածներ՝ն՞ թե, ինտերնացվածներ՝ն՞ թե, թե՞ ունեցել են որեւէ այլ կարգավիճակ միջազգային մարդասիրական իրավունքի շրջանակում: Այս հարցի պարզաբանումը չափազանց կարեւոր է: Ընտանիքներին դա կտա խիստ անհրաժեշտ վստահեցում եւ պատկերացում այն մասին, թե ինչպես են կալանավորվածները դիտարկվում միջազգային մարդասիրական իրավունքի եւ ԿԽՄԿ մարդասիրական այցելությունների չափորոշիչների շրջանակում:

Թույլ տվեք եզրափակել՝ արտահայտելով անկեղծ երախտագիտությունս այն սրտացավության եւ արժանապատվության համար, որն իր աշխատանքով ապահովում է Կարմիր Խաչը: Սրանք անփոխարինելի հատկանիշներ են, որոնց պակասը զգացվում է ամբողջ աշխարհում: Վերջում ցանկանում եմ դիմել ձեզ ոչ միայն պարզապես պաշտոնական նամակի ձեւով, այլեւ խորապես անձնական բնույթի կոչով՝ որպես մի կազմակերպության, որի առաքելությունը միշտ եղել է մարդու կյանքը, արժանապատվությունն ու արդարությունը ձեւականություններից ու քաղաքական նկատառումներից վեր դասելը: Մեզ նման ընտանիքների համար, որոնք ապրում են հարազատի երկարատեւ ու ապօրինի կալանքի ցավը, ԿԽՄԿ-ի մարդասիրության նկատմամբ հավատը հույսի աղբյուր է: Ես անկեղծորեն հավատում եմ, որ այդ ոգին կուղղորդի ձեզ՝ ուշադրություն դարձնել Ռուբեն Վարդանյանի եւ կալանավորված մյուս հայերի հետ կատարվողին:

Հարգանքով՝Վերոնիկա Ջոնաբենդ»:

● *Անցած 1 օրում գրանցվել է 10 ավտովթար. 3 մարդ զոհվել է, 13-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՊԱՏԱՍԽԱՆԵԼ Է

«ԴԱ ԿՓՐԿԵՐ ՄԵՐ ԶԻՆՎՈՐՆԵՐԻ ԿՅԱՆՔԵՐԸ»

«Երեկ մենք ներկայացրինք մեր անվտանգային ծրագիրը: Անվտանգային ծրագրի ներկայացումից հետո շատերն են խոսում, թե ինչու ենք ներգրավել օտարերկրյա պրոֆեսիոնալների, հույն մասնագետի եւ հիմնականում Իսրայելի հակաօդային պաշտպանության նախկին հրամանատար, բրիգադային գեներալ Սվիկա Հայմովիչին»:

Այս մասին տեսանյութ է հրապարակել «Ուժեղ Հայաստան» կուսակցության խորհրդի անդամ Նարեկ Կարապետյանը՝ պատասխանելով նշվող հարցերին: «Ամենակարեւոր սկզբունքը զինվորի անվտանգությունն է: Մեր զինվորի անվտանգությանը հասնելու համար մենք կաշխատենք աշխարհի բոլոր լավագույն մասնագետների հետ: Գեներալն աշխարհի հինգ լավագույն հակաօդային պաշտպանության մասնագետներից է: Մենք մեծ ջանքեր ենք ներդրել, որպեսզի ներգրավենք նրան եւ նրա թիմը Հայաստանի օդային պաշտպանության համակարգի վերաստեղծման գործում: Ինչո՞ւ: Որովհետեւ 2020 թվականին, մենք հիշում ենք, որ ամենամեծ կորուստներն ունեցանք օդային պաշտպանության անկատարության պատճառով, այսինքն՝ մեզ այս պահին հարց բարձրացնողները, թե ինչու ենք հրավիրել, երբ որ քո որդին լինի սահմանին, դիրքերում ու բայրաքթարն իր գլխի վերեւը լինի, դու կասես՝ ինչո՞ւ ես իսրայելցի բերել, որ այդ բայրաքթարը խոցելու տարբերակներ առաջարկի մեր երկրին, թե՞ կասես՝ ճիշտ ես արել: Դուք ձեր որդիների, եղբայրների վրա օրինակը վերցրեք»,- նշել է նա:

Նա հավելել է, որ իրենք ասում են՝ զինվորի անվտանգությունն է առաջնայինը, որի համար բոլորի հետ աշխատելու են, աշխատելու այնպես, որ ՀՀ-ն իրապես ունենա փակ օդ:

«Որպեսզի հասկանաս՝ ունես փակ օդ թե ոչ մինչեւ պատերազմը, դու պետք է գտնես աշխարհում լավագույն հակաօդային պաշտպանություն ունեցող երկիրը, այս պահին դա Իսրայելն է, ու այդ համակարգի ստեղծողին, ով պրոֆեսիոնալ խորհրդատվություն տալ կարող է իր թիմով: Գիտեմ՝ կան մտավախություններ այն հարաբերությունների հետ կապված, որն Իսրայելն ունի տարածաշրջանային երկրների հետ, բայց այդ հարաբերությունները նրանք ստեղծել են այսպես համագործակցելով:

Մենք էլ կստեղծենք աշխարհի բոլոր ուժեղ, ակտիվ գործոնների հետ համագործակցելով, ոչ թե կփակվենք մեր մեջ, վերջում էլ կտեսնենք, որ բոլորը պայմանավորվեցին, բոլորը զինվեցին, մենք էլ մեր զինվորին թողեցինք առանց օդային պաշտպանության: Մեր Աբովյան քաղաք էր հասել դրոնը, եթե չեք մոռացել, ասում է՝ ինչու եք պրոֆեսիոնալ, աշխարհի հինգ լավագույն մասնագետներից մեկին բերում: Դուք ինչո՞ւ չեք արել, ութ տարվա մեջ միլիարդավոր հարկ ենք ձեզ տվել, ինչո՞ւ չեք արել»,-եզրափակել է Նարեկ Կարապետյանը: (Գ)

ՖԱՍԹ ԲԱՆԿ

Գ

ԴԱՐՁԵԼ Է «ՎԱՆ» ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԱԿՈՒՄԲԻ ԳԼԽԱՎՈՐ ՀՈՎԱՆԱՎՈՐԸ

Ֆասթ Բանկն ու Չարենցավանի «Վան» ֆուտբոլային ակումբն օրերս գործակցության պայմանագիր են կնքել, որով Բանկը հովանավորելու է նոր ձեւավորված ֆուտբոլային թիմին:

Ֆասթ Բանկում կարեւորում են ֆուտբոլի առաջխաղացումը, տաղանդավոր երիտասարդների բացահայտումը եւ նրանց համար զարգացման հավասար հնարավորությունների ստեղծումը:

Ֆասթ Բանկի ֆինանսական տնօրեն Գոհար Հարությունյանը նշել է. «-Մենք հաստատապես համոզված ենք, որ մեր ֆուտբոլը կարող է մեծ բարձունքների հասնել միայն այն ժամանակ, երբ բոլորիս ուժերը միավորվեն, իսկ ֆուտբոլային կենտրոնները լինեն նաեւ մայրաքաղաքից դուրս: «Վանը» թեեւ երիտասարդ թիմ է եւ նոր նախագիծ, բայց արդեն հասցրել է ցույց տալ իր բնավորությունը: Մեզ համար մեծ պատիվ է աջակցել այսպիսի պայքարող թիմի: Ֆասթ Բանկն իր հերթին նույնպես երիտասարդ, բայց շատ ամբիցիոզ ու արագ զարգացող կառույց է: Մենք սիրում ենք համարձակ նպատակներ դնել մեր առջեւ, ուստի վստահ եմ՝ մեր եւ «Վանի» համագործակցության արդյունքում ակնկալվող արդյունքը կդառնանք շատ գեղեցիկ եւ հիշարժան հաղթանակների»:

«Վան» ակումբը հիմնադրվել է 2019 թվականին եւ կարճ ժամանակում հասցրել է դառնալ Հայաստանի Բարձրագույն խմբի մրցունակ թիմերից մեկը՝ ցուցադրելով կայուն խաղ եւ համառ պայքար: «Վան» ակումբը ոչ միայն հաջողությամբ հանդես է գալիս առաջնություններում, այլեւ նպաստում է Չարենցավանում ֆուտբոլի նկատմամբ հետաքրքրության աճին:

«Ուրախ եմ այս համագործակցության համար, որով «Վան» ֆուտբոլային ակումբի գլխավոր հովանավորը Ֆասթ Բանկն է, եւ վստահ եմ, որ այս համագործակցությունն էլ ավելի կնպաստի մեր ակումբի եւ Չարենցավանի ֆուտբոլի զարգացմանը եւ մեր հետագա նպատակների իրագործմանը»,-ասել է «-Վան» ՖԱ գլխավոր տնօրեն Սեւադա Արզումանյանը:

Ֆասթ Բանկում կարեւորում են սպորտային, կրթական, մշակութային եւ այլ ոլորտների զարգացումը: Վերջին շրջանում Բանկը դարձել է «Փյունիկ» ակումբի կանանց, երիտասարդական թիմերի եւ «Երեւան» ֆուտզալի ակումբ տիտղոսային հովանավորը:

Ֆասթ Բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը 24/7 աշխատանքային գրաֆիկով ներկայացված է Երեւանում եւ Հայաստանի բոլոր մարզերում:

Ֆասթ Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

ԱՇԽԱՐՀ

ՄԵԿ ԵՐԲՈՐԴՈՎ ԱՃԵԼ ԵՆ

Եվրոպայում գազի գները կտրուկ թռիչք են գրանցել Քաթարի էներգաօբյեկտներին Իրանի հասցրած հարվածից հետո, որն իրականացվել է ի պատասխան «Հարավային Պարս» գազի հանքավայրի վրա հարձակման: Այս մասին գրում է Bloomberg-ը: «Եվրոպայում բնական գազի գներն աճել են 35%-ով»,- նշված է հրապարակման մեջ: Բացի այդ, Իրանի հարվածը լուրջ տատանումներ է առաջացրել նաեւ նավթի շուկայում, գրում է պարբերականը:

Հինգշաբթի օրը QatarEnergy պետական ընկերությունը հայտնել է, որ հեղուկացված բնական գազի արտադրության օբյեկտները լուրջ վնասներ են կրել: Իր հերթին, Իրանը նախազգուշացրել էր, որ կհարձակվի Քաթարի, Սաուդյան Արաբիայի եւ ԱՄԷ-ի էներգաօբյեկտների վրա՝ ի պատասխան իր «Հարավային Պարս» հանքավայրին Իսրայելի եւ ԱՄՆ-ի հասցրած հարվածների:

Մարտի սկզբին QatarEnergy-ն հայտարարել էր անօդաչու թռչող սարքերի հարվածների պատճառով ՀԲԳ արտադրության դադարեցման մասին: Ընդ որում, արտադրանքի մեծ մասն ուղղվում էր ԵՄ:

Վերլուծաբանների կարծիքով՝ եթե հակամարտությունը ձգձգվի, Եվրոպան ռիսկի է դիմում բախվել գնային շոկի, որը համադրելի կլինի 2022 թվականի գարնան հետ: Այն ժամանակ գնանշումները հասնում էին 3892 դոլարի՝ հազար խորանարդ մետրի դիմաց:

ԱՅՍԲԵՐԳԻ ԳԱԳԱԹՆ Է

Պենտագոնի պահանջած 200 միլիարդ դոլարը միայն այսբերգի գագաթն է: Այս մասին X-ի իր էջում գրել է Իրանի ԱԳ նախարար Աբբաս Արաղչին:

«Այս 200 միլիարդ դոլարը միայն այսբերգի գագաթն է: Սովորական ամերիկացիները կարող են շնորհակալություն հայտնել Բենիամին Նեթանյահուին եւ Կոնգրեսում նրա կամակատարներին՝ տրիլիոնավոր դոլարների հասնող «Իսրայելն առաջնահերթ է» հարկի համար, որը պատրաստվում է հարվածել ԱՄՆ-ի տնտեսությանը»,- գրել է Արաղչին:

Հիշեցնենք, որ ավելի վաղ Washington Post-ը հայտնել էր, որ Պենտագոնը Սպիտակ տնից խնդրել է Կոնգրեսի կողմից հաստատել լրացուցիչ ֆինանսավորում Իրանի հետ կապված ռազմական գործողությունների համար՝ ավելի քան 200 միլիարդ դոլարի չափով:

ԴՈՒՐՍ ԵԿԱՎ ԱՀԿ–ԻՑ

Արգենտինան ավարտել է Առողջապահության համաշխարհային կազմակերպությունից դուրս գալու գործընթացը, սոցիալական ցանցերում հայտարարել է արտաքին գործերի նախարար Պաբլո Կիրնոն: «Արգենտինայի դուրս գալը ԱՀԿ-ից ուժի մեջ է մտել մեր երկրի կողմից դրա մասին պաշտոնապես տեղեկացվելուց մեկ տարի անց »,-գրել է նա:

Նրա խոսքով՝ «Արգենտինան կշարունակի միջազգային համագործակցությունը առողջապահության ոլորտում՝ երկկողմ համաձայնագրերի եւ տարածաշրջանային ֆորումներին մասնակցության միջոցով, միաժամանակ պահպանելով ինքնիշխանությունը եւ առողջապահական քաղաքականության վերաբերյալ որոշումներ կայացնելու կարողությունը»:

Արգենտինան հետեւել է Միացյալ Նահանգներին՝ դուրս գալով ԱՀԿ-ից: Բուենոս Այրեսի վարչակազմը որպես այս քայլի արդարացում մեջբերել է ԱՀԿ-ի գործողությունները COVID-19 համավարակի ժամանակ:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐՆ Է ՍՏԵՂԾՈՒՄ ԱՆՀԱՏՆԵՐ

Տեղի ունեցավ երիտասարդ գեղանկարիչ Արեգ Միրզյանի «Անդեմ խաղ» ցուցահանդեսը: ArmLur.am-ը նրա հետ զրուցել է իր՝ «Անդեմ խաղ» ցուցահանդեսի եւ մշակույթի մասին:

-Ողջույն, Արեգ: Կպատմե՞ք մեզ ցուցահանդեսի ընթացքի մասին. ի՞նչ էմոցիաներ եւ տպավորություններ ունեք, ի՞նչ հետաքրքիր հյուրեր ունեցաք:

-Ցուցահանդեսի բացումը տեղի ունեցավ մարտի 9-ին՝ ժամը 19:00-ին: Մեր բոլորիս կողմից սիրված պոետ, հաղորդավար Ավետ Բարսեղյանը ազդարարեց բացումը, այնուհետեւ ելույթ ունեցավ արվեստաբան, արվեստագիտության թեկնածու, դոցենտ, Հայաստանի ազգային պատկերասրահի գիտահետազոտական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Սամվել Հովհաննիսյանը: Այնուհետեւ «Ուրու» ռոք բենդն իր հրաշալի ռոք համերգով, Երեւանի թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտի «Պարարվեստի ռեժիսուրա» բաժնի ուսանողներն իրենց փերֆորմանսով, որը եւս թեմատիկ ուղիղ կապ ուներ իմ «Անդեմ խաղ» շարքի հետ: Պետք է շեշտեմ, որ Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտության ազգային կենտրոնն այդ օրն իսկապես բազմամարդ էր. տարբեր ոլորտներից հյուրեր ունեինք:

-Արեգ, կասե՞ք՝ ինչու հենց «Անդեմներ» վերնագիրն եք ընտրել:

-«Անդեմ խաղ» վերնագիրն ընտրել եմ ըստ ցուցահանդեսին ներկայացվող իմ 3 կտավի համաձայն, որոնք 3 տարբեր անդեմություններ էին: Աշխատանքները անհատականության կորստի մասին են մի դարաշրջանում, երբ համընդհանրությունն ու ստանդարտացումը դառնում են նորմա, մարդիկ ավելի ու ավելի են կորցնում իրենց դեմքը՝ եզակիության եւ ներքին ամբողջականության խորհրդանիշը: Մենք ընկղմվում ենք մի աշխարհում, որտեղ անհատը լուծվում է զանգվածների մեջ եւ կորցնում իր ուրվագծերը:

-Հատկապես ի՞նչ եք շեշտել նկարներում, ի՞նչ եք պատմում Ձեր նկարներով:

-«Անդեմ խաղ» ցուցահանդեսը ժամանակակից մարդկային վիճակի մանրակրկիտ վերլուծությունն է, որտեղ մարդիկ կորցնում են իրենց ինքնությունը, աշխատանքները արտացոլում են ինքնագիտակցության խորը ճգնաժամը՝ ստեղծելով տարածք՝ անհատի իրական բնույթի եւ հասարակության մեջ նրա տեղի վերաբերյալ մտորումների համար: Չնայած աշխատանքները բազմաժանր են, որտեղ եւս արծարծվում է մարդու՝ մայր բնությունից հեռանալու ցավագին փաստը, կան տարբեր անհատների դիմանկարներ, որը ի հակադրումն է անդեմությանը, այսինքն 2 տարբեր թեմա 1 ցուցահանդեսում: Իսկ բնանկարները այն խորը կարոտն են բնության նկատմամբ, որտեղ մարդը միշտ փախչում է՝ մայր բնության մեջ ապավեն գտնելու:

-Որքա՞նով է ցուցահանդեսը Ձեզ համար, որպես քաղաքացի, բողոք կամ կոչ մեր հասարակությանը:

-Ցուցահանդեսը եւ բողոք է, եւ անհանգստություն, եւ հարցադրում. մարդն ի՞նչ է դառնում ժամանակի թոհուբոհի մեջ, չէ՞ որ ինքնության պայքարն է հենց ստեղծում անհատներ: Խոսքը բնավ այն մասին չէ, որ բոլորը պիտի անհատներ լինեն, խոսքը ինդիվիդումի մասին է, տեսակի ու արժեհամակարգի պահպանման մասին է, զանգվածների մեջ մաս չկազմելու մասին է:

-Արեգ, որպես երիտասարդ բեմանկարիչ եւ գեղանկարիչ՝ կասե՞ք՝ ինչի կարիք ունի այսօր արվեստը, եւ ինչ է հանրությանը պետք ամենից շատ:

-Որպես երիտասարդ բեմանկարիչ եւ գեղանկարիչ՝ ես կարծում եմ, որ հայ արվեսն այսօր ավելի կարիք ունի հանրայնացման, աջակցության թե՛ պետական մակարդակով, թե՛ բարերարների կողմից, որպեսզի հայ արվեստագետները՝ հատկապես երիտասարդ սերունդը, հնարավորություն ունենա իր ստեղծագործությունները ներկայացնել միջազգային հարթակներում՝ այդպես ավելի խթանելով հայ մշակույթի զարգացումն ու ներկայացումը: Վստահ եմ, որ յուրաքանչյուր ազգի առանձնահատկությունը դրսեւորվում է իր արվեստով եւ մշակույթով: Իսկ հայ ազգն ունի հսկայական ժառանգություն համաշխարհային արվեստում, ուստի պետք է պահել եւ զարգացնել այն:

Զրուցեց ԱԼԼԱ ԹՈՎՄԱՍՅԱՆԸ

ԱՄԵՆԱՊԱՀԱՆՋՎԱԾ ԱՐՏԻՍՏՆԵՐԻՑ Է

Երբ տաղանդը համադրվում է անդադար աշխատասիրության հետ, արդյունքը լինում է ստեղծագործական այնպիսի բուռն ուղի, որն անցնում է երգչուհի Անետ Աղաբեկյանը: Երգի պետական թատրոնի սանից մինչեւ արտասահմանյան հեղինակավոր բեմեր՝ Անետն այսօր հայկական շոու-բիզնեսի ամենաղահանջված արտիստներից է:

Անետ Աղաբեկյանի ստեղծագործական հիմքերը դրվել են «Արթուր Գրիգորյանի անունը կրող Հայաստանի Երգի պետական թատրոնում՝ ՀՀ վաստակավոր արտիստ Գայանե Հովհաննիսյանի վոկալ-դասարանում: Հանրությանը նա հայտնի դարձավ «Հայաստանի ձայնը», «Հայ Սուպերսթար» եւ «Ամենակարող երգիչ» նախագծերից:

«Նախագծերն ինձ համար մեծ դպրոց էին: «Ամենակարող երգիչ» նախագծի մասին ես միշտ ջերմությամբ եմ հիշում. ամեն շաբաթ նոր ժանր էինք ներկայացնում. դա ինձ սովորեցրեց լինել ճկուն եւ չվախենալ փորձարկումներից: Այդ ելույթները մինչ օրս իմ ամենասիրելի հիշողություններից են: Այն լուրջ դպրոց էր, որն ինձ հասցրեց մինչեւ եզրափակիչ եւ կերտեց այն արտիստին, որն այսօր կա բեմում»:

2021 թվականից երգչուհու գործունեությունը թեւակոխեց որակական նոր փուլ: Նախ տեղի ունեցավ Անետի առաջին մենահամերգը «Յանս» մյուզիք հոլում՝250 հանդիսատեսի համար: 2022-ին նրան հաջողություն բերեց «Գիշերով հիշելով» երգը, որը երկար ժամանակ չէր զիջում բոլոր թոփ տասնյակները՝ յութուբյան հարթակում գրանցելով 24 միլիոն դիտում: Ժամանակը երկար սպասեցնել չտվեց եւ «Ժամանակ» երգով Անետը կրկին գրավեց երաժշտական բոլոր թոփ տասնյակների առաջին հորիզոնականները՝ յութուբում գրանցելով 20 մլն դիտում: Իսկ նպատակասլաց ու արտիստիկ այս երգչուհու՝2023 թվականին Սուպեր Սաքոյի հետ թողարկած «-Սիրտդ սրտիս» զուգերգը դարձավ իրական ֆենոմեն՝Յութուբում գրանցելով ավելի քան 15 միլիոն դիտում: Այն Անետի համար բացեց նոր դռներ՝ Ֆրանսիայից մինչեւ ԱՄՆ-ի հեղինակավոր «Դոլբի» կինոթատրոն:

ՄԱՐՔԱԿԱՆ

ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ

Արման Ծառուկյանը դուրս է մղել Մաքս Հոլոուեյին՝ վերադառնալով UFC-ի լավագույնների (P4P) ցանկ: Հայազգի խառը մենամարտերի (MMA) մարտիկ, UFC-ի թեթեւ քաշային կարգի երկրորդ համար Արման Ծառուկյանը վերադարձել է կազմակերպության քաշային կարգերից անկախ (Pound-for-Pound կամ P4P) լավագույն մարտիկների թոփ-15: Ըստ պրոմոուշընի մամուլի ծառայության հրապարակած նոր վարկանշային աղյուսակի՝ 29-ամյա Ծառուկյանը զբաղեցրել է 15-րդ հորիզոնականը: Այս ցուցակից նա դուրս է մղել կիսաթեթեւ քաշային կարգի նախկին չեմպիոն, ամերիկացի Մաքս Հոլոուեյին, ով իր վերջին մենամարտում պարտություն էր կրել Չարլզ Օլիվեյրայից: Բրազիլացին, իր հերթին, բարելավել է դիրքերը՝բարձրանալով 11-րդ հորիզոնական: Արման Ծառուկյանն այժմ գտնվում է հիանալի մարզավիճակում եւ ունի 5 անընդմեջ հաղթանակների տպավորիչ շարք: Նա օկտագոն է դուրս եկել նախորդ տարվա նոյեմբերին՝ Քաթարում կայացած «UFC Fight Night 265» մրցաշարի շրջանակում, որտեղ արդեն երկրորդ ռաունդում խեղդող հնարքով տպավորիչ հաղթանակ է տարել նորզելանդացի հայտնի մարտիկ Դեն Հուկերի նկատմամբ: Մասնագիտական կարիերայում Ծառուկյանն ընդհանուր առմամբ անցկացրել է 26 մենամարտ, որոնցից 23-ում հաղթել է, իսկ 3-ում պարտվել (UFC-ում նրա ցուցանիշն է՝ 10 հաղթանակ եւ 2 պարտություն):

ԵԿԱՎ ՔԱՌՈՐԴ ԵԶՐԱՓԱԿԻՉ

Չեմպիոնների լիգայի 2025/26 թթ. խաղարկության 1/8 եզրափակչի պատասխան խաղում անգլիական «Լիվերպուլը» սեփական հարկի տակ 4-0 հաշվով վստահ առավելության հասավ թուրքական «Գալաթասարայի» նկատմամբ: Տանտերերի կազմում հաշիվը 25-րդ րոպեին բացեց Դոմինիկ Սոբոսլայը: Երկրորդ խաղակեսում մերսիսայդցիները եւս երեք անպատասխան գնդակ ուղարկեցին հյուրերի դարպասը. 51-րդ րոպեին աչքի ընկավ Հյուգո Էկիտիկեն, ընդամենը երկու րոպե անց Ռայան Գրավենբերխը խփեց երրորդ գոլը, իսկ հանդիպման վերջակետը 62-րդ րոպեին դրեց Մոհամեդ Սալահը:

ՌԵԿՈՐԴԱԿԻՐ

Իսպանիայի չեմպիոն «Բարսելոնայի» լեհ հարձակվող Ռոբերտ Լեւանդովսկին Չեմպիոնների լիգայի 1/8 եզրափակիչի պատասխան խաղում անգլիական «Նյուքասլ Յունայթեդին» երկու գոլ խփելու շնորհիվ ռեկորդ է սահմանել Չեմպիոնների լիգայում: «Բարսելոնան» «Նյուքասլ Յունայթեդին» հաղթել էր 7:2 հաշվով եւ դուրս եկել քառորդ եզրափակիչ: Լեւանդովսկին դարձել է Չեմպիոնների լիգայի պատմության մեջ դուբլի ավագագույն հեղինակ: Նա աչքի է ընկել 37 տարեկան եւ 209 օրականում, հաղորդում է Squawka-ն: Լեւանդովսկին գերազանցել է «Միլանի» նախկին խաղացող, իտալացի Ֆիլիպո Ինձագիի ռեկորդը, որը գրանցվել էր 2010թ. Մադրիդի «Ռեալի» դեմ խաղում:

● *Մարտի 22-ին Միեր Մկրտչյան արտիստական թատրոնում տեղի կունենա «Հեքիաթներ հեռախոսով» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000, 3000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասեք, թե ինչ ժամկետում պետք է նշանակվի կենսաթոշակը:

Էմմա Հարությունյան (42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը դիմումն ընդունելուց հետո՝ տասը աշխատանքային օրվա ընթացքում, հիմք ընդունելով ներկայացված փաստաթղթերը եւ պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի տվյալները, կայացնում է հետեւյալ որոշումներից մեկը՝ նշանակել կենսաթոշակ, նշանակել կենսաթոշակ եւ տեղեկացնել կենսաթոշակը վերահաշվարկելու համար լրացուցիչ փաստաթուղթ ներկայացնելու անհրաժեշտության մասին, մերժել կենսաթոշակ նշանակելը: Կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը կենսաթոշակ նշանակելը մերժելու կամ անձին կենսաթոշակ նշանակելու եւ լրացուցիչ փաստաթուղթ ներկայացնելու անհրաժեշտության մասին որոշում կայացնելու դեպքում հինգ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին պատշաճ կարգով ծանուցում է կենսաթոշակ նշանակելու համար դիմած անձին՝նշելով մերժելու պատճառները եւ որոշումը բողոքարկելու կարգը:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Աշխատանքային կենսաթոշակի չափը հիմնական կենսաթոշակի չափի եւ կենսաթոշակի աշխատանքային մասի գումարն է: Կենսաթոշակի աշխատանքային մասը աշխատանքային ստաժի տարիների, աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքի եւ կենսաթոշակառուի անձնական գործակցի արտադրյալն է:

ՀՈԳԵՎՈՐ

ՀԱՐՑ. Ինչո՞ւ է եկեղեցին մերժում պայծառատեսներին, որոնք իրականում բարի գործ են անում՝ օգնում են մարդկանց իմանալ ապագան, որ կարողանան պատրաստվել գալիք արհավիրքներին:

Իրինա Մելիքյան (43 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ձեր հարցից ենթադրվում է, որ Աստված չար է, քանի որ ծածկում է մեզնից մեր ապագան, իսկ գուշակը՝ բարի, ով իբր թե բացահայտում է մեր ապագան: Համոզված եղեք, որ գուշակությունը խաբեություն է, որը հակասում է աստվածաբանական ճշմարտությանն այն մասով, որ ապագան հայտնի է միայն Աստծուն: Պատահական չէ, որ մարդուց ծածկված է իր ապագան. նա էությամբ ազատ է եւ ի վիճակի՝ փոխելու իր ապագան: Եթե մարդը կանխավ իմանար այն, ինչ լինելու է, ապա կընկալեր իր կյանքը ճակատագրապաշտորեն, կդադարեր հակառակվել մեղքին եւ ձգտել լավագույնին: Նա կկորցներ իր ազատությունը: Կյանքը ճակատագրապաշտորեն ընկալելով՝ մարդը կապրեր ոչ թե ապագա ինչ-որ բարի իրադարձությունների հույսով, այլ չհաշտվելով վատ ապագայի հետ՝ կընկներ հոռետեսության եւ հուսահատության գիրկը: Դրա համար եկեղեցին արգելում է մարդկանց գնալ գուշակների մոտ: Բացի այդ, գուշակությունը հիմնված է այն համոզման վրա, որ մարդու ապագան կանխորոշված է եւ մանրամասնորեն «ծրագրավորված», այսինքն՝ ենթադրում է, որ մարդկային կյանքը ենթակա է ոչ թե Աստծո կանխագիտությանը, այլ, որպես կանոն, մարդու նկատմամբ թշնամաբար կամ, մեղմ ասած, ոչ բարյացկամ տրամադրված խորհրդավոր ուժերին: Դա բերում է մարդու՝ Աստծո հետ անձնական կապի թուլացման եւ, ի վերջո, խզման, որը հիմված է հնազանդության, հավատի եւ վստահության վրա: Ապագան իմանալու ձգտումով գերված մարդը, հիմնվելով գուշակության վրա, անկարող է դառնում աղոթել եւ սուրբ խորհուրդների կյանքով ապրել, որի հետեւանքով աստիճանաբար ընկնում է դիվական ուժերի ազդեցության տակ:

Արարատյան հայրապետական թեմ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Բացի այդ, գուշակների օգնությանը դիմող եւ նրանց հավատացող մարդու մոտ ծագում են վախի, անօգնականության, հալածվածության եւ հուսահատության զգացումներ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝shamshyan.com-ի

Ուժեղ քամին Հայրավանքում պոկել եւ շպրտել է առողջական խնդիրներ ունեցող ամուսինների տան տանիքը. հայրը 44-օրյա պատերազմում վիրավորում է ստացել, տղան այժմ զինվորական ծառայության է:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	- 1 - 2 + 4 + 8
	Կոտայքի լեռներ	- 1 + 2 + 3 + 7
	Կոտայքի նախալեռներ	+ 3 + 6 + 9 + 12
	Գեղարքունիք	0 - 3 + 2 + 6
	Լոռի	0 + 3 + 3 + 7
	Տավուշ	+ 2 + 5 + 5 + 8
	Արագածոտնի լեռներ	0 - 2 + 2 + 6
	Արագածոտնի նախալեռներ	+ 3 + 7 + 9 + 13

	Արարատ	+ 4 + 8 +11 + 14
	Արմավիր	+ 5 + 8 +12 + 15
	Վայոց ձորի լեռներ	- 2 + 1 + 2 + 5
	Վայոց ձորի նախալեռներ	+ 5 + 8 +11 + 15
	Սյունիքի լեռներ	0 - 3 0 + 3
	Սյունիքի նախալեռներ	+ 2 + 5 + 5 + 9
	Սյունիքի հովիտներ	+ 6 + 9 +12 +15
	Երեւան	+ 6 + 8 +11 +13

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **19.03.2026**
Տպաքանակ՝3968
Հասցեն՝Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*